

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Հայ հոգևոր մշակույթի երկու մեծ երախտավորներ՝ Ավետիք Իսահակյանն ու Արշակ Չոպանյանը, եղել են ջերմ բարեկամներ, միմյանց նկատմամբ տածել մեծագույն հարգանք, խորին ակնածանք ու սեր: Նախքան հանդիպելը ծանոթ են եղել իրար շնորհիվ իրենց ստեղծագործությունների ու գործունեության: 1923 թ. վերջին Ա. Չոպանյանին գրած նամակում Իսահակյանը փաստում է. «Ես պատիվ եմ ունեցել միշտ Ձեր անկեղծ գնահատողն ու հիացողը լինելու ավելի քան 25 տարվա ընթացքին, երբ «Անահիտը» տակավին չէիք հրատարակել, երբ 1897 թ. ծանոթացա «Արշալույսի ձայներին» հետ, և տարեցտարի աճեց իմ սերն ու հարգանքը Ձեր անունին ու գործին»¹: Իսկ Չոպանյանը Իսահակյանին ճանաչել է կարդալով Նիկոլ Աղբալյանի ընդարձակ գրախոսականը նրա առաջին «Երգեր ու վերքեր» ժողովածուի (1898, Ալեքսանդրապոլ) վերաբերյալ տպագրված «Մուրճ» ամսագրի 1898 թ. 6-րդ համարում: Երկկողմ հետաքրքրությունը շարունակվել է նամակների փոխանակությամբ:

Առաջին նամակը, որ գրել է Ա. Չոպանյանը Իսահակյանին «Մուրճ»-ի հասցեով՝ ուղղված Ավետիք Արասխանյանցին հավանաբար 1898 թվականի վերջերին (տե՛ս 160), ցավոք, չի պահպանվել և ոչ էլ հասել է հասցեատիրոջը (տե՛ս 158, 173)²: Մակայն այդ նամակի բովանդակության մասին բանաստեղծի արած ենթադրությունները պարզում են նրա հնարավոր իմաստը (տե՛ս 158), որ հաստատվում է Չոպանյանի հաջորդ նամակով: Ն. Աղբալյանի՝ Իսահակյանի անդրանիկ ժողովածուի մասին ընդարձակ գրախոսականի³ միջոցով ծանոթանալով նորատիպ «Երգեր ու վերքեր» գրքույկի մի շարք բանաստեղծական կտորնե-

¹ Տե՛ս Ա. Ինձիկյան, Իսահակյանի և Չոպանյանի նամակագրությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1970, էջ 166: Այսուհետև այս հրատարակությունից կատարված մյուս մեջբերումների հղումները կտրվեն բուն շարադրանքում՝ փակագծերի մեջ նշելով էջահամարը:

² Այդ ժամանակ Ավ. Իսահակյանը ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու պատճառով ցարական կառավարության կողմից արքայազան էր Օդեսայում (տե՛ս 173), նաև՝ «Հայ նոր գրականության պատմություն» (ՀՆԳՊ), հ. 5, Եր., 1979, էջ 344:

³ Ն. Աղբալյանի Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի մասին գրախոսականը՝ «Երգ ու վերք» խորագրով, տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1898 թ. 6-րդ համարում:

րին՝ Չոպանյանը խնդրում է այդ հաստորը և երիտասարդ հեղինակին հրավիրում աշխատակցելու իր խմբագրած նորաստեղծ «Անահիտ» հանդեսին (տե՛ս 158): Արդեն փորձառու ու վաստակաշատ քննադատը, որ միշտ առանձնացել է իր խորաթափանցությամբ՝ նորեկ-սկսնակ հեղինակների մեջ հայտնաբերելու տաղանդի նախադրյալներ, խանդավառված Իսահակյանի առաջին գրքով, գրում է. «Ես չափազանց սիրուն կըգտնեմ Ձեր բանաստեղծությունները: Թերևս ամենեն ինքնատիպը, ամենեն տաքն ու շնորհալին եք Կովկասի հայ բանաստեղծներուն...» (160):

Իսահակյանը Չոպանյանին ուղղված առաջին իսկ նամակում՝ գրված Ալեքսանդրապոլից, «կամա-ակամա» բացում է սիրտը իր բնորոշմամբ՝ անձանոթ, բայց վաղուց ծանոթ բարեկամի առաջ, ներկայացնում իր անորոշ կացությունը բանտարկությունից ու արքորից հետո՝ «ո՛ւր գնալ, ի՞նչ անել»: Պատմում է նաև հայրենիքում տիրող անմխթաթափ լիճակի, գրականության ու հայ գրողների նկատմամբ անտարբերության, իշխանություններից հալածանքների մասին: Այդ նամակը լի է վշտով ու դրամատիզմով, որտեղ ուրվագծվում է երիտասարդ անհատի կերպարը՝ իր իդեալներով, դժվարություններով, երազներով ու հիասթափություններով. «Ի՞նչ անել այստեղ.- հայ դպրոցները փակ, գրադարան ընթերցարանները փակ. գրականությունը ճնշված՝ ինչո՞վ ոգևորվել.- ժողովրդո՞վ,- հարցնում է Իսահակյանը ու պատասխանում.- Ժողովուրդը ծաղրում է ազգությունը... և շա՛տ ստոր մակերևույթի վրա է նրա հոգու աշխարհը... Այս բոլորին կան նպաստող, սիստեմատիկ, հանգամանքներ-պայմաններ. հասկանալի են, որ արվեստական և բարձրից նյութած որոշ քաղաքական գործունեության պտուղ:

Ի՞նչ անել այստեղ... այս հարցը ինձ բոլորովին ջլատում է, և ես հիմա շա՛տ հուսահատված եմ և կորած թե՛ ինձ և թե՛ ուրիշների համար...» (158-159):

Իսահակյանի այս նամակը վշտացրել է Չոպանյանին, տխրեցրել և նրան մնացել է միայն քաջալերել երիտասարդ բանաստեղծին, ինչպես ինքն է գրում, «պահպանել կրակը մոխրին տակ» (160):

Առաջին նամակների փոխանակումից հետո, հավանաբար 1900 թ., բանաստեղծի արտասահմանյան երկրորդ ուղևորության ժամանակ, Փարիզում, ինչպես վկայում է Արամ Ինճիկյանը, տեղի է ունեցել նրանց անձնական ծանոթությունը (տե՛ս 157): Դժբախտաբար, վավերագրական տվյալներ չկան այդ հանդիպման մասին, և կարելի է միայն հավանական ենթադրություններ անել:

Հետագայում նրանք հանդիպել են 1908 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ կաթողիկոսական ընտրություններին մաս-

⁴ Հնչակյան կուսակցությանը պատկանելու մեղադրանքով Իսահակյանը 1896 թ. մայիսին ձերբակալվել է և բանտարկվել Երևանի բանտում, որտեղ մնացել է մինչև 1897 թ. ապրիլի 17-ը: Ազատվելուց հետո՝ արքորվել է Օդեսա և հայրենիք վերադարձել միայն 1899 թ. հունվարին (տե՛ս 173, նաև՝ ՇՆԳՊ, էջ 344):

նակցելու կապակցությամբ Չոպանյանը Մուշի և Շապին-Գարահիսարի պատգամավորի հանգամանքով Պուլսից ժամանել էր Կովկաս⁵ (կաթողիկոս ընտրվեց Մատթեոս Իզմիրյանը): Ու թեև այդ հանդիպումների մասին հուշեր չեն գրվել, սակայն հուշերից թանկ մի մասունք է մնացել՝ մի լուսանկար, որտեղ Չոպանյանն է Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Կոմիտասի, Վրթանես Փափագյանի և Գևորգ Բաշինջաղյանի հետ վերջինիս արվեստանոցում:

Մինչև Ա. Չոպանյանի Թիֆլիսից հեռանալը 1908 թ. դեկտեմբերին հակացարական մեղադրանքով Իսահակյանը, Թումանյանը և էլի շատ ուրիշներ ձերբակալվում են և բանտարկվում Մետեխում⁶: Չոպանյանը, անհանգստացած կալանավորների, մասնավորապես Թումանյանի և Իսահակյանի ճակատագրով, 1909 թ. հունիսին Մատթեոս Իզմիրյան կաթողիկոսին ուղղած նամակում «խորհուրդ է տվել միջամտել Նիկոլայ Երկրորդ կայսեր առջև՝ հայ կալանավորներին ազատելու կալանքից»⁷: Չոպանյանը գրում է. «Մեծ ուրախությամբ իմացա այն սիրալիք ընդունելությունը, զոր Չարը Ձեզ շնորհել է... Արդյոք Ձեր տեսակցության մեջ կարելի էղա՞վ բառ մ'ըսել Կովկասի ձերբակալությանց մասին, ձերբակալվածներուն մեջ կան անձնավորություններ, որ թանկագին են ամբողջ հայության համար, Հովհաննես Թումանյան և Ավ. Իսահակյան աննման բանաստեղծները (ձերբակալված 7-8 ամիս առաջ)... Ինչու այս մտավոր ու մարդասիրական գործիչները թշնամի կնկատվին Ռուսիո և կխոշտանգվին: Այս բոլորի կիմանամ, որ Թումանյան արձակվել է, երանի թե լուրը ճիշտ ըլլար: ...Ինչ մեծ բարիք ըրած պիտի ըլլայիք հայության, եթե կարենայիք ստանալ իրենց (և անշուշտ բոլոր ձերբակալվածներուն) ազատումը»⁸:

Ինչպես հայտնի է, վեցամսյա բանտարկությունից հետո իշխանությունները խոշոր գրավով բանտից ազատում են և՛ Թումանյանին, և՛ Իսահակյանին⁹: Իսկ այն ժամանակ, երբ ստույգ հայտնի է դառնում, որ Իսահակյանին սպառնում է տասը տարվա սիբիրյան աքսոր, նա մինչև դատավարությունը՝ 1911 թ. հուլիսի 12-ը, փախչում է արտասահման¹⁰:

Նրանց նամակագրական կապը վերականգնվում է միայն 1917 թվականի վերջերին: Այստեղ անցողակի նկատենք այն հաճելի իրո-

⁵ Տե՛ս **Կ. Դալլաքյան**, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 317, **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ: Տասր հատորով, հ. 10, Նամակներ, Եր., 1999, էջ 498, նաև **Ա. Չոպանյան**, Նամականի, Եր., 1980, էջ 418:

⁶ Տե՛ս **Ավ. Իսահակյան**, Հիշատակարան, Եր., 1977, էջ 460, նաև՝ ՆՆԳՊ, էջ 344, **Նվ. Թումանյան**, Հուշեր և գրույցներ, Եր., 1969, էջ 93-95, **Լ. Հախվերդյան**, Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995, էջ 31, 32:

⁷ «Արշակ Չոպանյանի անտիպ նամակներից», «Բանբեր Հայաստանի արխիվներին», Եր., № 2, 1965, էջ 50:

⁸ Նույն տեղում, էջ 55-56:

⁹ Տե՛ս **Ավ. Իսահակյան**, Երկեր, Եր., 1987, էջ 862:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 864, նաև ՆՆԳՊ, էջ 344, **Ավիկ Իսահակյան**, Ավետիք Իսահակյանի պոեմները, Եր., 2007, էջ 122-123:

դությունը, որ եթե նախորդ նամակներում նամակագիրները միմյանց ողջունելիս իրենց խոսքը սովորաբար սկսում էին «մեծապատիվ պարոն» (Բսահակյանը՝ Չոպանյանին), «սիրելի պարոն» (Չոպանյանը՝ Բսահակյանին) դիմելաձևերով, ապա նոր նամակները սկսում են «սիրելի բարեկամ» հղումով, իսկ հետո ավելանում է մի նոր նրբերանգ՝ «սիրելի եղբայր» կամ «սիրելի բարեկամ»: Իսկ նույն նամակները ավելի հաճախ ավարտում են «Ընդունեցեք սրտագին (սիրալիր) բարևներս», «Միրալիր համբույրներով» (Ա. Չոպանյան), «Ընդունեցեք ջերմ բարևներս և հարգանքներս: Մնամ Ձեզ միշտ անկեղծ բարեկամ», «Ջերմ բարևներով և խորին հարգանքով մնամ Ձեր անկեղծ բարեկամ», «Մնամ Ձեզ անձնվեր», «Եղբայրական համբույրներով, միշտ Ձեզ անձնվեր» (Ավ. Բսահակյան) վերջընթեր արտահայտություններով, որոնք անկասկած ասված են սրտանց՝ առանց որևէ ձևականության, և հուշում են նրանց հարաբերությունների անկաշկանդ անմիջականությունը:

Գուցե անձնական, ազգային-քաղաքական-հասարակական հայտանի ծանր հանգամանքները (Բսահակյանի վտարանդիությունը, Առաջին համաշխարհային պատերազմը, Եղեռնը, գաղթը և այլն) հետագայում պատճառ դարձան նրանց միջև կապի առժամանակ թուլացման, համեմայնդեպս, ինչպես արդեն նկատեցինք, 1899 թվականից հետո հաջորդ հայտնի նամակը գրված է Չոպանյանի կողմից 1917 թ. նոյեմբերի 17-ի ամսաթվով՝ Փարիզից: Փոքրածավալ՝ մի քանի տողից բաղկացած նամակում Չոպանյանը շնորհակալություն է հայտնում Բսահակյանին «Ալազգյազի մանիների» դեռ անտիպ չորրորդ երգը Փարիզի «Վերածնունդ»-ի (1917-1921 թթ.) խմբագրությանը ուղարկելու համար, որին այդ ժամանակ աշխատակցում էր ինքը (տե՛ս 174). «Ձեր անտիպ բո՛ւ-ին գլուխը գոր դրկեր եք **Վերածնունդի** կաղանդի թիվին համար, գմայլելի է, հայոց լեռներեն իջնող աղբյուրի պես վճիտ, զով ու ծաղկաբույր» (160):

Մեկ ամսվա տարբերությամբ գրված հաջորդ նամակում, պատասխանելով Բսահակյանի նամակին, որը, ափսոս, չի պահպանվել, Չոպանյանը չի թաքցնում, որ բանաստեղծի՝ իր «մասին տածած բարյացակամ զգացումները շատ քաղցր են» իրեն, և այն ամենը, ինչ ինքն անում է հարազատ ժողովրդի համար, շատ քիչ է իր ցանկացածի համեմատությամբ: Այս դիտարկումներից դժվար չէ կռահել, թե ինչ է բովանդակել Բսահակյանի նամակը Չոպանյանի անձի ու գործի մասին, որ բանաստեղծը միայն բարեկամական զգացումով չի առաջնորդվել՝ մեծարելով իր ընկերոջը. նրա համար գնահատման գլխավոր ելակետը և չափանիշը եղել են Չոպանյանի՝ իր ժողովրդին մատուցած ծառայությունը:

Փարիզյան իր հեռաստանից Չոպանյանը, ինչպես հասկանում ենք նրա նույն նամակի հետագա շարադրանքից, կարեկից աջակցության ձեռք է մեկնում Բսահակյանին՝ չնչին գումարի հետ (իր բնութագրումն է) խոստանալով նաև միջնորդել, որ ուրիշները ևս նյութապես օժանդակեն նրան (տե՛ս 161):

Իսկ նամակը ավարտվում է բանաստեղծին ուղղված սրտապնդիչ այն հավատով, թե «այդքան տաղանդ ու կենսունակություն ունեցող ցեղ մը չի կրնար կորչիլ» (161): Հաջորդ նամակում ևս, հակիրճ անդրադառնալով հայությանը հուզող ժամանակակից քաղաքական հարցերին և մանավանդ Բրեստ-Լիտովսկի բանակցություններին, որոնց վերաբերյալ ուներ իրատեսական դժգոյն կանխատեսումներ, ընկերոջը խորհուրդ է տալիս չվհասովել. «Մեր ազգը և մեր culture-ը չեն կորչիր: Անոնք նույնիսկ հակառակ բոլոր աղետներուն՝ մեծ ապագա կրնան ունենալ՝ եթե մենք՝ արտասահմանի հայերս, կորովով ու թաքթով գործենք» (162):

1918 թ. Չոպանյանը դառնում է «Վերածնունդ» կիսամյա հանդեսի խմբագրապետը և Փարիզից Ժնև՝ Իսահակյանին հասցնել տալիս պարբերականի համարները, որտեղ, ի դեպ, պարբերաբար տպագրվել են վերջինիս բանաստեղծությունները¹¹:

Իսահակյանը Չոպանյանին ուղղված նամակներում պարբերաբար, տարբեր առիթներով արտահայտում է իր ջերմ զգացումները բարեկամի նկատմամբ, ազնիվ մեծարանքի ու հիացումնքի խոսքեր ուղղում նրան՝ մասնավորապես նկատի ունենալով ազգանվեր գործչի՝ հայ ժողովրդին եվրոպացիներին ծանոթացնելու հսկայածավալ գործը: Օրինակ՝ 1918 թ. դեկտեմբերի 5-ի նամակում գրում է. «Հիացած եմ Ձեր անսպառ եռանդի վրա. Դուք մեն-մենակ ավելի բան եք արել հայ գրականության համար, և եվրոպացիներին ծանոթացնելու մեզ հետ, քան ընկերությունները զանազան՝ միասին առած: Մեծ հույս ունեմ, որ մոտակա ազատ Հայաստանը անսահման կորով է տալու Ձեր ստեղծագործությանը» (162):

1918 թ. փոխադարձ նամակները շատ հաճախ շոշափում են Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակին վերաբերող բազմաթիվ հարցեր, ընդհանուր մտահոգություններ՝ հարազատ ժողովրդին սպասվող ճակատագրի վերաբերյալ: Այդ նամակներում կա և՛ հույս, և՛ հավատ, միաժամանակ և՛ անվստահություն, և՛ տագնապ, և՛ վախ... (տե՛ս 162, 163): Ահա, օրինակ, պատմական ծանր, սակայն հուսաբեր այդ օրերին, երբ բանաստեղծը համակված էր երկրի անկախության գաղափարով և ձեռնամուխ էր եղել «Մասնա Միեր» պոեմի ստեղծմանը¹², խանդավառված ինչ է գրում Չոպանյանին դեկտեմբերի 5-ի նամակում. «Հայաստանը, որ վերջ ի վերջո իրականանալու է մեր արյու-

¹¹ Տե՛ս «Վերածնունդ», Փարիզ, 1918, №1-2, էջ 6-7, 9-10, 1919, №1-2, էջ 4, №12, էջ 200, №13, էջ 217, №17, էջ 283, №18, էջ 294, №19, էջ 308, №26, էջ 429, №29, էջ 468, №31, էջ 507, 1920, №1-2, էջ 3, №11, էջ 155, №13, էջ 187-188, №14, էջ 206, №18, էջ 264, №19, էջ 279-280, №20-21, էջ 293, №22, էջ 342, №26, էջ 414, №29-30, էջ 460, №36-37, էջ 373: Ի դեպ, «Գրական թերթ»-ի 1965 թ. 44-րդ համարում Ավ. Իսահակյանի «Մասնա Մանուկ» պոեմից մեջբերված հատվածի ծանոթագրության մեջ նշելով, որ ստեղծագործությունը առաջին անգամ տպագրվել է «Վերածնունդ» հանդեսում, սխալմամբ տպագրման տարեթիվ վկայված է 1919 թ., մինչդեռ իրականում 1920 թվականն է (տե՛ս «Վերածնունդ», 1920, №13, էջ 187-188, №14, էջ 206, №18, էջ 264, №19, էջ 279-280, №20-21, էջ 293):

¹² Տե՛ս **Ավիլի Իսահակյան**, նշվ. աշխ., էջ 177:

նողող լեռների վրա, իմ հոգին լցնում է անսահման ուրախությամբ և անսահման վշտով միաժամանակ. ինչպե՛ս մոռանալ մեկ միլիոն մեռելները. ինչպե՛ս մոռանալ. ի տես ազատ և մեծ Հայաստանի՝ նույնիսկ անկարելի է մոռանալ հարյուր տարվա չափ՝ մեր անծայր աղետը» (162): Օրերի տարբերությամբ հաջորդ նամակում, սակայն, գրում է. «Շա տ եմ վախենում, և հիմք ունիմ վախենալու, թե մի գուցե Հայաստանի մոտակա ազատությունը ծագի մեր ժողովրդի համատարած գերեզմանոցի վրա» (164): Նույն նամակում Իսահակյանը բարեկամից խնդրում է ձեռքից եկածը անել՝ օգնելու հայությանը:

Բարեկամների միջև նամակագրական կապը դարձյալ վերականգնվում է գրեթե երկուսուկես տարվա դադարից հետո: 1921 թ. գարնանը Բեյրութից գրած նամակում Չոպանյանը պատմում է Փարիզի հայկական պատվիրակության հանձնարարությամբ Բեյրութ և Կիլիկիա կատարած առաքելության մասին¹³, հավատացած, որ երբևէ կհանդիպեն, և ինքը հանգամանորեն կներկայացնի տեսածն ու արածը: Նամակում, ընդմիջարկելով իր խոսքը «Հայրենի աղբյուրից» նորատիպ ժողովածուի առթիվ, որին ինքը ծանոթացել էր Մերսինում (Թուրքիա- Վ. Ա.), Չոպանյանը գրում է. «Դժնդակ (ու գեղարվեստեն փարսախներով հեռու եղող) աշխատանքներուս մեջ այդ զմայլելի տաղերուն ընթերցումը զովություն ու հանգիստ շնորհեց հոգիիս. զգացած մեծ ու մաքուր հաճույքիս համար Ձեզի շնորհակալության պարտք մը ունեի. այդ պարտքը կուզեմ կատարել այս տեղերեն դեռ չհեռացած» (164): Ակնարկը հավանաբար վերաբերում է Չոպանյանի՝ Իսահակյանի հիշյալ բանաստեղծական ժողովածուի վերաբերյալ հոդված գրելուն, որ, սակայն, չի իրականացրել:

Իսահակյանի պատասխան նամակը՝ գրված Վենետիկից, որտեղ նա տեղափոխվել էր Ժնևից, լցված է կատաղի ատելությամբ դեպի եվրոպական, մասնավորապես ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունը՝ հայկական դատի առնչությամբ, որի հետևանքը եղավ այն, որ 1921 թ. Անկարայում կնքված դաշնագրի համաձայն՝ Ֆրանսիան իր գործերը դուրս բերեց Կիլիկիայից՝ հայերի ճակատագիրը հանձնելով թուրք ջարդարարներին: «Ի՛նչ սհավոր դաս տվին ֆրանսիացիք մեզի. հանդիսավոր խոստումներից հետո, գիտակից և անգիտակ զոհաբերումներից հետո նորից քաշել հայությունը յաթաղանի տակ՝ դիվային, ճիվաղային բան է... Ըստ իս հայկական հարցը մեռած է արդեն, և Հայաստանից մի թիզ հող տվող չկա այլևս մեզ, և եթե մենք մարդ ենք ու զգացում ունինք, մենք պիտի հնարներ գտնենք պատժելու մեզ խաբողներին... Միլիոնի արյունը եվրոպացու խղճի վրա է ընկած, և նրանց կերած հացի մեջ հայ մանուկի արյուն կա... Այլևս ոչ մի հավատ չունիմ մեր հարցի մասին, և բոլորովին անմիտ, վնասակար եմ

¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 335-336:

գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը¹⁴, Ամերիկա կամ Պապին դիմումները. մամուլին,- այդ բոզերի ռիմակին,- դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը, և Ազգերի լիգայի կեղծավորությունը. հայերիս համար կոզակը (նկատի ունի Խորհրդային Ռուսաստանը- Վ. Ա.) ավելի իրական է, քան Վիլսոնը, Ջեյմ Բրայսը, և բոլորը... Վերջացած է ամեն ինչ. խաբված ենք ապուշի պես, պարտված ենք չարաչար. նոր ուղիներ պիտի փնտրել» (175),-այնուամենայնիվ հույսը դեռ չկորցրած գրում է Իսահակյանը:

1923 թ. վերամշակումից և լրացումներից հետո Ա. Չոպանյանը լույս է ընծայում «Վարդենիք Հայաստանեաց»-ի («La Roseaie d'Armenie») երկրորդ հատորը¹⁵ ձևված բնակալությանը գոհված հայությանը¹⁶: Մեծածավալ այդ գրքում (341 էջ), որի առաջաբանը նա գրել էր միայն Մերձավոր Արևելքից վերադառնալուց հետո՝ 1921 թ. վերջերին, տեղ էին գտել V-XVI դարերի հայ ժողովրդի գեղարվեստական հանճարի արգասիք դարձած արվեստի գործերի հարյուրավոր լուսանկարչական վերարտադրություններ: Այն ընդգրկում էր նաև բազմաթիվ հայ միջնադարյան նշանավոր և անհայտ հեղինակների մի քանի տասնյակի հասնող բանաստեղծությունների՝ ֆրանսերեն բարձրարվեստ թարգմանություններ, որ կատարել էր Չոպանյանը: Գիրքը ունի նախաբան, որտեղ հեղինակը ընդհանուր գծերով բնութագրում է թե՛ ժամանակաշրջանը և թե՛ հեղինակներին, ցույց տալիս հայ միջնադարյան բանաստեղծության զարգացման ուղին¹⁷:

Ինչպես առաջին, այնպես էլ «Վարդենիքի» երկրորդ հատորը արժանանում է ջերմ ընդունելության թե՛ հայ և թե՛ օտար, մասնավորապես ֆրանսիացի մտավորականների շրջանում, դրվատանքի խոսքեր են հնչում մամուլում: Ավ. Իսահակյանն էլ, Վենետիկում ստանալով բարեկամի այդ գիրքը, շտապում է նամակով արտահայտել իր հիացումն ու հպարտությունը. «Roseaie («Վարդենիք Հայաստանեաց»- Վ. Ա.) մի գանձարան է, մի դյուրական պարտեզ մեր փառքի, մեր լույսերի, մեր հանճարի. թերթում եմ, նայում եմ սքանչելի նկարները, որ կարծես համադրումը լինի հին և նորագույն արվեստների. կարդում եմ հոգուս ու վշտիս մտերիմ հազարամյա սրբագործված էջերը և ասում եմ ինձ. ահա՛ մի ժողովուրդ՝ մեծ իր հանճարով, երազով ու ողբերգությամբ...»

Եվ Ձեր դերը, սիրելի մեծանուն եղբայր, հսկայական է մեր մեջ, ու

¹⁴ Նկատի ունի Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ, և Արևմտահայոց համագումարի պատվիրակությունը՝ Պոդոս Նուբար Փաշայի նախագահությամբ, որոնք 1919-1921 թթ. արտասահմանում բանակցություններ էին վարում եվրոպական պետությունների իշխանությունների հետ Հայկական դատի կապակցությամբ (տե՛ս 175):

¹⁵ «Վարդենիքի» երկու հատորները 1914 թ. արդեն գրեթե պատրաստ էին. պատե՛րազմը հետաձգեց աշխատանքները: Ա հատորը լույս է տեսել 1918 թ., իսկ երրորդը՝ 1929 թ. տե՛ս **Կ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 353, 361:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 358:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 356-357:

անսպառ է Ձեր հայրենասիրությունը, Ձեր նվիրումը մեր ազգին, Ձեր վարձը գրեթե ոչինչ, քաղքենի մտքով, բայց անմոռանալի է ու պիտի մնա անմոռանալի Ձեր անունը» (166)¹⁸:

Նույն նամակի մեջ հակիրճ, մի երկու բառով գնահատելով Չոպանյանի «գծած պատկերներից» մի քանիսը «Տղու հոգիներ» շարքից («Առաջին նամակը», «Ես ինչ ընեմ հոգիով», «Անուրջ», «Աստուած պապան» և այլն)՝ Բսահակյանը նրան հրավիրում է Վենետիկ՝ խոստանալով «մեր հավերժ սիրելի Հովհ. Թումանյանի քեֆերն ունենալ այս օտար երկրում, բայց հայ հարկի տակ» (166):

Պատասխան նամակում Չոպանյանը շնորհակալություն է հայտնում Բսահակյանին իր գործի հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքի համար և նման բարյացակամ զգացումը գնահատում շատ թանկ, քանի որ, ինչպես ինքն է գրում, «Դուք մեր ազգային բանաստեղծության ամենեն մաքուր, քաղցր ու խորունկ ձայներեն մին էք» (167):

1924 թվականի նոյեմբերից նախաձեռնվում է Ա. Չոպանյանի 35-ամյա գրական-հասարակական գործունեության հորեյանական տոնակատարումը: Մինչև հորեյանական հանդեսը, որ տեղի ունեցավ Փարիզում 1925 թ. հունվարի 3-ին Ալ. Շիրվանզադեի նախագահությամբ, հորեյարի հասցեով ստացվում են հարյուրավոր շնորհավորական հեռագրեր աշխարհի տարբեր կողմերից¹⁹: Տոնակատարության օրերին Վենետիկից ստացվում է նաև Ավ. Բսահակյանի սրտագին ու ջերմ նամակը: Ափսոսանք հայտնելով, որ չի կարողացել ներկա գտնվել հորեյանին և բաժակ բարձրացնել Չոպանյանի թանկագին կյանքի համար, նա գրում է. «Միբելի եղբայր, այնքա՛ն մեծ է Ձեր գործը, այնքա՛ն ակնհայտնի է, և հանրության վաղուց բաժին Ձեր անունը, որ ավելորդ էմ զգում իմ կողմից և նույնիսկ վիրավորիչ Ձեզ համար էլ հազարների հետ կրկնելու այն անգին ծառայությունները, որ բերել էք դժվարին, տքնաջան պայքարների միջից՝ հայ գրի փառքի և հայ մշակույթի կատարյալ ձևավորման համար: Երկա՛ր, և՛ հերոսական, և՛ գեղեցիկ է եղել Ձեր անցած ուղին, և արդար են Ձեր վաստակները, և լիուլի արժանի էք հայրենիքի երախտագիտությանը» (167):

Նամակի հետ բանաստեղծի՝ Չոպանյանին ուղարկած երեք ժողովածուները՝ «Հայրենի աղբյուրից» (1920, Բոստոն), «Աշնան ծաղիկներ» (1922, Վենետիկ) և «Արձակ էջեր» (1923, Կ. Պոլիս), նրան հասնում են ավելի ուշ՝ զարդարված «այնքան սիրուն ձոներով» մակագրություններով. «Միբելի բարեկամիս՝ վաստակավոր հեղինակ և մեծ հայրենասեր Արշակ Չոպանյանին սրտագին նվեր», «Հոգու ընկեր, մեծանուն գրիչ Ա. Չոպանյանին», «Հայ մտքի անխոնջ մշակողին, բազմատաղանդ բարեկամիս՝ Ա. Չոպանյանին» (176): Ստացած նվերների կապակցությամբ

¹⁸ Այս նամակը առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ի 1965 թ. 44-րդ համարում՝ Ավ. Բսահակյանի ծննդյան 90-ամյակի առթիվ:

¹⁹ Տե՛ս Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 390:

պատասխան նամակում Ա. Չոպանյանը գրում է. «Զմայլելի է Ձեր արվեստը. Ձեզի հատուկ շեշտ մը ունիք, որ սրտին կը խոսի անմիջապես, որ զայն կը խոցե, կը փայփայե ու կ'արբեցնե միանգամայն» (171):

Տասնհինգամյա տարագրությունից հետո Ավ. Իսահակյանը, ինչպես հայտնի է, հայրենիք վերադարձավ միայն 1926 թ. սեպտեմբերի վերջին²⁰: Մինչ վերադարձը, երբ նա նույն տարվա ձմռանը Վենետիկից տեղափոխվել էր Փարիզ, Չոպանյանին նամակով առաջարկում է հանդիպել՝ իրար հետ «մի քանի հոգեկան վայելքի ժամեր անցկացնելու»²¹: Հանդիպում տեղի ունեցել է, թե՛ ոչ, ցավոք, տվյալներ չկան: Իսկ երբ Իսահակյանը արդեն հայրենիքում էր, որտեղ մնաց մինչև 1930 թ. գարնան կեսերը, կնոջը և որդուն՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին Փարիզ ուղարկած նամակներում պարբերաբար խնդրում է բարևներ փոխանցել Չոպանյանին²²:

Հետագայում Հայաստանից Փարիզ մեկնելու համար Իսահակյանը կնոջ միջնորդությամբ Չոպանյանից խնդրում է Ֆրանսիա մուտք գործելու համար թույլտվության դիմում անել, ու թեև Իսահակյանին արտոնություն տրվում է, սակայն նա չի մեկնում (տե՛ս 171-172): Մտածելով, որ բարեկամը որոշել է դեռ մնալ հայրենիքում, Չոպանյանը նրան խնդրում է իր աշխատակցությունը բերել «Անահիտի» նոր շրջանին²³, խոստանալով գործերի հրատարակումից հետո անմիջապես ուղարկել պատվագիրը. «Մեկ տպագիր էջին մեկ տողար, առ այժմ ավելին չեմ կրնար» (172),-անկեղծորեն գրում է հանդեսի խմբագրապետը:

Իսահակյանը «Անահիտի» նոր շրջանին ընդհատումներով սկսեց աշխատակցել՝ սկսած 1932 թվականից մինչև 1936 թվականը, երբ դարձյալ Փարիզում էր՝ հանդեսում տպագրելով իր բանաստեղծություններից²⁴:

Մինչև Իսահակյանի վերջնական վերադարձը հայրենիք՝ Հայաստան, նրանք քանի՞ անգամ են հանդիպել և ե՞րբ, դարձյալ տեղեկություններ չկան: Պահպանվել է միայն Ավ. Իսահակյանի մի կարճատև նամակը Չոպանյանին՝ թվագրված 1930 թ. հուլիսի 15-ով, որտեղ նա հանդիպում է խնդրում վերջինիս տանը²⁵:

Ա. Չոպանյանը Ավ. Իսահակյանի ստեղծագործությանը, գրական արվեստին առանձին ծավալուն անդրադարձավ միայն 1936 թ.՝ բանաստեղծի ծննդյան 60-ամյա տարեդարձի և գրական գործունեության 40-ամյակի առիթով՝ կարդալով բանախոսություն Փարիզում նրա պատվին հրավիրված ճաշկերույթի ժամանակ²⁶: Այդ զեկույցը ընդլայ-

²⁰ Տե՛ս ՇՆԳՊ, էջ 345:

²¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1979, էջ 222-223:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 257, 262, 263, 265, 275:

²³ «Անահիտի» նոր շրջանը սկսվել է 1929 թ. մայիս-հունիս միացյալ համարով:

²⁴ Տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1932-1933, №3-6, էջ 15-16, 1933, №1-2, էջ 24-25, 1936, №1-2, էջ 4-5:

²⁵ Տե՛ս Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, էջ 284:

²⁶ Տե՛ս Ա. Չոպանյան, Դեմքեր. Աւետիք Իսահակեան, «Անահիտ», Փարիզ, 1936, №4, էջ 49: Այսուհետև այս հոդվածից կատարված մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ՝ նշելով հեղինակի ազգանվան սկզբնատառը և էջահամարը:

ներով՝ արդեն որպես հողված շուտով այն տպեց «Անահիտ» հանդեսում՝ «Դեմքեր» խորագրի տակ (տե՛ս Չ, 49-57):

Չոպանյանը ևս մեկ անգամ հաստատում է, որ հայ բանաստեղծությունը հին ժամանակներից մինչև ներկա օրերը եղել է մեր ազգի մեծ փառքերից, նրա հոգեկան գործության շքեղագույն պտոթկումներից մեկը: Այն միշտ մեր ժողովրդին արժանապատվորեն կանգնեցրել է աշխարհի մեծ ազգերի կողքին: Ավ. Իսահակյանի քնարերգությունը գնահատվում է որպես մեկը հայ հանճարի այդ մեծագույն արտահայտություններից, և բանաստեղծը արժանանում է բանախոսի «ազգային բանաստեղծ» բարձր պատվանունին (տե՛ս Չ, 49):

Չոպանյանը Իսահակյանին համարում է մեր նոր քերթության այն գլխավոր սյուններից մեկը, որը «մեծ վիպերգող Թումանյանին կողքին՝ եկաւ դառնալ մեծ քնարերգակը արեւելեան Հայութեան ու մեծագոյն քնարերգակներէն մին ամբողջ հայ ազգին» (Չ, 53): Հայ մեծանուն բանաստեղծների սեղմ համեմատության մեջ թեև Իսահակյանի ստեղծագործությունը նա տեսնում է Թումանյանից շատ տարբեր, սակայն գործի ուրույն արժեքով համարում է նրան հավասար, իսկ «հայ ժողովրդական բանահիստութեան հանդէպ իր տաճած ջերմ սիրով եւ անոր մասին իր խոր հասկացողութեամբ՝ անոր մտաւոր եղբայր» (Չ, 53):

Հողվածագիրը հիշում է, թե ինչպես տարիներ առաջ՝ Իսահակյանի ստեղծագործական կյանքի առաջին շրջանում, երբ հրճվանքով նրա անդրանիկ գործերում տեսել է «ցեղադրոշմ, խորագգաց ու նրբանկատ բանաստեղծի մը յայտնութիւն», գրողի հարցմանը՝ արդյոք ճիշտ է ժողովրդական երգերի ներշնչանքով տաղեր հյուսելու ուղղությունը, ինքը ջերմորեն խրախուսել է նրա՝ ազգային համեղ ոճի ու լեզվի միջոցով անձնական զգացումները թարգմանելու ձգտումը: Ասել է թե՛ Չոպանյանը ևս օգնել է երիտասարդ Իսահակյանին ճիշտ կողմնորոշվելու սեփական արվեստի հունը որոնելիս:

Ա. Չոպանյանը, որքան որ թույլ են տալիս բանախոսության և լրագրական հողվածի ծավալն ու սահմանները, իրեն հատուկ մասնավոր խորաթափանցությամբ ուրվագրում է Իսահակյանի գործի էական հատկանիշները, բնութագրում ստեղծագործության զարգացման և թեմատիկ հետաքրքրությունների տարբեր փուլերը, մեկնում նրա արվեստի հոգեբանական առանձնահատկությունները, արժևորում տարբեր ժանրերով ստեղծված երկերը: Իսահակյանի ստեղծագործության վերաբերյալ այդ կարևոր և արժեքավոր ընդհանրացումները, սեղմ ու դիպուկ գնահատականներ, որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի մի բան՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչում առած, սակայն չնոռանանք, որ Չոպանյանը այդ ամենը ասել է շուրջ իննսուն տարի առաջ: Եվ այսօր, երբ բաղդատում ենք Չոպանյանի բոլոր ասույթները ընդհանրապես Իսահակյանի և նրա ամբողջ ստեղծագործության վերաբերյալ, մեր առջև կանգնում է հայ անցյալ ու ներ-

կա, արևելյան ու արևմտյան գրականությանը քաջատեղյակ գրագետը, որի խոսքը տարբեր ժամանակներում տարբեր առիթներով հաստատվել ու վերահաստատվել է հետագա ուսումնասիրողների կողմից:

Բանալի բառեր – *Ավետիք Բահալյան, Արշակ Չոպանյան, հոգեկցություն, ընկերություն, նամականի, հուշ, վկայություն, բանախոսություն*

ВАЧАГАН АВАГЯН – Из взаимоотношений Аветика Исаакяна и Аршака Чопаняна. – В статье впервые вкратце прослежены тёплые дружеские взаимоотношения двух выдающихся деятелей армянской культуры – Аветика Исаакяна и Аршака Чопаняна. Их духовные связи объясняются как взаимной симпатией, так и схожими размышлениями о судьбе родного народа; двух писателей роднили также идейные, эстетические и литературные интересы и вкусы. Существенное место отведено в статье переписке писателей, в которой явственно сказались их сердечная дружба и содержатся впечатляющие примеры литературной и человеческой близости двух современников и соотечественников.

Ключевые слова: *Аветик Исаакян, Аршак Чопанян, привязанность, дружба, собрание писем, воспоминание, свидетельство, речь*

VACHAGAN AVAGYAN – From Relationships between Avetik Isahakyan and Arshak Chopanyan. – For the first time, the article attempts to briefly present the relationships between two prominent figures of Armenian culture, Avetik Isahakyan and Arshak Chopanyan – mutually warm and friendly, sharing ideological, literary, and aesthetic interests, concerns about the fate of their native people. The author pays special attention to their correspondence, revealing beautiful stories of the two writers' spiritual relationship and impressive examples of national, literary, and human compassion.

Key words: *Avetik Isahakyan, Arshak Chopanyan, affection, friendship, collection of letters, memory, testimony, speech*

Ներկայացվել է՝ 06.10.2020, Գրախոսվել է՝ 20.11.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020